ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 մայիսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

63
(2913)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՆԴԱՏԻ ՀԵՏ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ Է ԶԲԱՂՎՈՒՄ



ԱԺ ներկայիս պատգամավորների որոշ մասը, մինչ մանդատ ստանալը, զբաղվում էր գործարարությամբ, մանդատից հետո, օրենքի պահանջի համաձայն՝ բիզնես կամ գործարար գործունեությունը հավատարմագրում այլ անձի եւ զբաղեցնում անձեռնմխելի պաշտոնը: Սա օրենք է բոլորի համար. սակայն օրենքը «օրենք չէ», եթե այն բացառություններ չունի ՔՊ-ական պատգամավորների համար: Խոսենք փաստերով:

Այսպիսով՝ ՀՀ օրենքի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին օրենքը սահմանում է՝ պատգամավորական մանդատը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պատգամավորը պարտավոր է՝

1) դուրս գալ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից,
2) ազատվել առեւտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնից,
3) դուրս գալ առեւտրային կազմակերպություններից կամ դրանց կանոնադրական կապիտալում իր բաժնեմասն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման,
4) հրաժարվել առեւտրային կազմակերպությունում ուրիշի գույքի հավատարմագրային կառավարումից,
5) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոններից, բացառությամբ՝ սույն հոդվածի 5-րդ մասում նշված պաշտոնների,
6) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ՝ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

Օրինակ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Թագուհի Ղազարյանը, պատգամավորական մանդատին զուգահեռ, զբաղվում է նաեւ նյութերի թվայնացմամբ, խմբագրմամբ. հենց այս աշխատանքի համար էլ պատգամավորը 2023 թվականին «Գրանիշ» գրական ակումբի կողմից պարգեւատրվել է այդ տարվա ընթացքում արխիվային նյութերի թվայնացման, խմբագրման ու նորովի մեկնաբանման համար:

Այս ամենը գուցե նորմալ դիտվեր այն դեպքում, երբ այս աշխատանքը համարվեր ստեղծագործական աշխատանք, սակայն փաստաթուղթը, որը ներկայացված է, ամենեւին ստեղծագործական տարրեր չի պարունակում: Ավելին՝ կազմակերպությունը, այս դեպքում՝ գրական ակումբը, որտեղ գործունեություն է ծավալում Ղազարյանը, որը գործում է ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ, անհամատեղելի պաշտոն է համարվում պատգամավորական մանդատ ունեցող անձի համար:

Ըստ մեր տեղեկությունների՝ Թագուհի Ղազարյանը, Բուն TV-ում հաղորդում վարելու համար, նախորդ տարի դիմել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով թույլտվություն ստանալու համար, հավաստիացրել է, որ այն պարբերական բնույթ չի կրելու: Հանձնաժողովը թույլատրել է, քանի որ այն դիտարկվել է որպես ստեղծագործական աշխատանք, սակայն այս դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը աչք է փակում եւ ոչ մի արձագանք չի տալիս, համենայնդեպս, այդ մասին որեւէ արձանագրում չկա:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Մայիսի 12-ին Հայաստանի գավաթի եզրափակիչ խաղում «Արարատ-Արմենիան» հետխաղյա 11 մետրանոց հարվածաշարով հաղթեց «Ուրարտու» ՖԱ-ին ու իր պատմության մեջ առաջին անգամ նվաճեց Հայաստանի գավաթը: Սա զուտ սպորտային իրադարձություն կլիներ, եթե պարգեւատրման ու գավաթի հանձնման արարողությունը չուղեկցվեր սկանդալով: Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտում ներկա երկրպագուների աչքից չի վրիպել փաստը, որ պարգեւատրման արարողության ժամանակ «Արարատ-Արմենիայի» ֆուտբոլիստներին մոտեցող ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանին եւ նրան ուղեկցող Արմեն Նիկողոսյանին, ըստ էության, բոյկոտել է թիմի մարզչական շտաբը՝ Վարդան Մինասյանի գլխավորությամբ, ու չի մոտեցել ՀՖՖ նախագահին՝ գավաթը հանձնելու պահին: Այսքանով ամեն բան չի ավարտվել. կատարվածից սաստիկ զայրացած ՀՖՖ ղեկավարությունը, ոչ պաշտոնապես, հայտարարել է, որ այլեւս չի վաճառի ՀՖՖ տեխնիկական կենտրոն ակադեմիայի մի հատվածը «Արարատ-Արմենիային», որի մասին «Հրապարակի» մեր գործընկերների հետ զրույցում խոսել էր թիմի պաշտոնյաներից մեկը՝ ըստ էության հաստատելով, որ բանակցություններն «Արարատ-Արմենիայի» ու ՀՖՖ-ի միջեւ այս ուղղությամբ ընթանում են: Ֆուտբոլային աշխարհի մեր աղբյուրները հայտնում են, որ այս քայլով, «Փյունիկ» ՖԱ-ից հետո «սեւ ցուցակում» կհայտնվի նաեւ «Արարատ-Արմենիան»: Հիշեցնենք, որ «Արարատ-Արմենիան» պատկանում է «Տաշիր Գրուպի» սեփականատեր Սամվել Կարապետյանին, իսկ այդ թիմի գլխավոր մարզիչն է Հայաստանի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը, որը ՀՖՖ նախագահի վերջին ընտրություններից առաջ իր դիրքորոշումն էր հայտնել՝ չսատարելով ինչ-ինչ ճանապարհներով ՀՖՖ նախագահ դարձած Արմեն Մելիքբեկյանին: Մենք բազմիցս անդրադարձել ենք ՀՖՖ-ում տիրող ոչ ֆուտբոլային բարքերին, ֆինանսական ոչ թափանցիկ՝ ուստի հարցեր առաջացնող խնդիրներին, տարբեր տարիքային հավաքականների խայտառակ արդյունքներին ու բազմաթիվ նմանատիպ հարցերի:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի դեմ հարուցված կարգապահական վարույթը ուղարկվել է ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդ: Ի՞նչ է սպասվում Ռոբերտ Քոչարյանի գործը քննող դատավոր Աննա Դանիբեկյանին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ արդարադատության նախարարը մարտի 1-ից ՀՀ առաջին նախագահ Ռոբերտ Քոչարյանի դեմ հարուցված քրեական գործը քննող, Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցել, եւ այն այս պահին ուսումնասիրում են: Ավելին՝ ըստ մեզ հասած լուրերի՝ վարույթի հարուցման հիմքը «Մարտի 1-ի» գործն է: «Ժողովուրդ» օրթաթերթը դիմել էր ՀՀ արդարադատության նախարարություն, որտեղից հայտնել էին, թե կարգապահական վարույթների մասով տեղեկությունները հրապարակման ենթակա չեն»: Մնում է սպասել, թե դատավորների անկախությունը ապահովելուն կոչված ԲԴԽ-ն ի՞նչ վարքագիծ կդրսեւորի. կպատժի՞ դատավորին, թե՞ կների՝ Քոչարյանի գործով ինչ-ինչ որոշումների համար:



Ս.թ. ապրիլի 1-ի խորհրդակցության ժամանակ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց նոր նշանակումների մասին, այդ թվում՝ իր խորհրդական Պետրոս Պետոյանի: «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով Պետոյանի պաշտոնական կենսագրությունը, պարզեց, որ պաշտոնյան իր նշանակման իրական օրվա մասին կենսագրական տվյալներում գրել է՝ մարտի 19: Անհամապատասխանության նման մեծ՝ 14-օրյա ինտերվալը չէր կարող վրիպման արդյունք լինել: Սա նշանակում է, որ քաղաքապետարանում ակնհայտորեն չեն տիրապետում իրավիճակին եւ պաշտոնական նշանակումների ժամանակագրությանը: Հ.Գ. Չի բացառվում, որ ՔՊ-ի օրոք անձը նախ «նշանակվում» է ամենակարեւոր պաշտոնին, ապա նոր ֆորմալ առումով հրամանագրվում է՝ օրինական կարգով. կամ էլ Պետոյանը ուղղակի դրանք շփոթել է կենսագրությունը լրացնելիս, բայց, անհարմար է այս դեպքում էլ:

ԶՐՈՒՅՑ

ԿԱՆԱԴԱՅՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՆ ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կանադայի թեմին պատկանող եկեղեցին գրավադրելու վերաբերյալ վերջին օրերին մամուլում բազմաթիվ հրապարակումներ են տարածվում, իբրեւ թեմի առաջնորդի պարտականություններն իրականացնելիս Բագրատ սրբազանը գրավ է դրել եկեղեցին՝ պարտքեր փակելու համար:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է սրբազան հոր հետ:

-Սրբազան հայր, իշխանական լրատվամիջոցները Ձեր մասին նյութ են տարածել, որ 2013 թվականին Կանադայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին գրավադրել եք: Ի՞նչ կասեք այս մասին:

-Անգրագիտության մեծագույն աստիճանի են այս մարդիկ: Ստախոսության գլուխգործոցն են վերստին դրսեւորում: Առաջնորդը Կանադայում լինի, թե Ամերիկայում, նյութական իրավասություն չունի: Կա թեմական խորհուրդ, կալվածոց խորհուրդ. եթե գրավադրելու հարց կա, ապա ազգային խորհուրդ կա, կա թեմական խորհուրդ, կալվածոց տեսչություն կա:

-Նույն իշխանական լրատվամիջոցները նաեւ տեղեկություններ են տարածում, որ Հանրապետության հրապարակում տեղադրված բեմի համար օրական 25.000 ԱՄՆ դոլար է վճարվում:

-Իմ գործը Ձեզ հարցազրույց տալն է, քայլելն է, մեկ էլ՝ խոսելը. մնացածի հետ ես գործ չունեմ: Իրենք լավ էլ գիտեն թվերն էլ, ամեն ինչն էլ: Կանադայի հետ կապված էլ ասեմ, եթե որեւէ խնդիր կա, այսօր Տավուշի թեմի գործունեության 90%-ը կանադահայերն են հովանավորում: Այդ նույն մարդիկ հենց Կանադայում բարերարներ են: Եվ խնդրում եմ՝ պաշտոնապես դիմեք կանադահայոց թեմին, ու թող այնտեղից պատասխան տան՝ գրավադրվե՞լ, է թե՞ ոչ:

-Սրբազան հայր, նախօրեին քաղաքական գործիչ Արման Բաբաջանյանը իր ֆեյսբուքյան էջում գրել էր, որ լիահույս է՝ Կաթողիկոսի հետ նախատեսված հանդիպումից հետո Ամենայն հայոց կաթողիկոսը Ձեզ կուղարկի հետ՝ Տավուշի թեմ:

-Բայց նա ո՞վ է, որ ինչ-որ բան ասի... Ո՞վ է նա: Նրա կենսագրությունն ի՞նչ է, տեսե՞լ եք, կարդացե՞լ եք: Մի գնացեք Արման Բաբաջանյանին հարցրեք, ասեք՝ խնդրում եմ, Ձեր կենսագրության մասին պատմեք: Այդ հսկա հեռուստաընկերությունը եւ այլնը, ո՞ւմ փողերով ես արել...Եվրամիություն, Ամերիկա...:

Հ.Գ. Հիշեցնեմ, որ Civic.am լրատվականը օրերս հոդված էր հրապարակել, որում, մասնավորապես, նշվում էր. «Կանադայում լույս տեսնող Armenian Mirror-Spectator շաբաթաթերթը 2013 թվականի հուլիսի 20-ի իր համարում խայտառակ մանրամասներ է ներկայացրել այդ ժամանակվա՝ Կանադայի թեմի առաջնորդ Բագրատ սրբազանի գործունեությունից:

Գալստանյանը, նախ, Կանադայի թեմը ներքաշել է ինչ-որ տարօրինակ ֆինանսատնտեսական գործունեության մեջ, որի արդյունքում գոյացել են հարյուր հազարավոր դոլարների պարտքեր, իսկ հետո էլ փորձել է գումարի դիմաց գրավ դնել Կվեբեքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին»:

Վերոնշյալին անդրադառնալով էլ՝ Տավուշի թեմի առաջնորդը ընդգծել էր, որ հենց նույն կանադահայերն են այսօր ֆինանսավորում Տավուշի թեմի գործունեությունը, եւ որ առաջնորդը ֆինանսական իրավասություններ չունի, հետեւաբար՝ նման գործունեություն ծավալել չէր կարող:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՍՈՒՏ 206

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՆՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՉԻ ՍՏԵՂԾՎԵԼ

2018 թվականի ապրիլի 15-ին՝ Ֆրանսիայի հրապարակում ունեցած ելույթի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Եթե որեւէ քաղաքացի ՀՀ-ն լքեց եւ չվերադարձավ 24 ժամվա կամ մեկ շաբաթվա ընթացքում, համակարգը նրան ավտոմատ հանում է ընտրողների ցուցակից, հենց մտնում է երկիր, նորից ներառվում է ցուցակում: Պետք է ստեղծվի ընտրական հանցագործությունները հետաքննող հատուկ մարմին, որի ղեկավարի թեկնածուին պետք է առաջադրի ընդդիմությունը կամ ընդդիմադիր խմբակցությունները՝ կոնսենսուսով»:

Իհարկե, այս խոստումներից եւ ոչ մեկը չի կատարվել. ընտրական հանցագործությունները հետաքննող հատուկ մարմին Հայաստանում չի ստեղծվել: Ինչ վերաբերում է Հայաստանից մեկ օր անգամ բացակայողներին ընտրացուցակներից հեռացնելու խոստմանը, այն եւս չի կատարվում: Ավելին՝ ընտրացուցակների վերաբերյալ փաստերն ու ահազանգերը բազմաթիվ են, որ դրանցում տեղ են գտնում մահացած, երկրից բացակայող անձինք եւ այսպես շարունակ:

Կարճ ասած՝ Փաշինյանը խաբել է:

«ԺԱՌԱՆԳԱԿԱՆ» ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐՄԱ՞Լ Է

««Ժառանգական» մարզպետությունը նորմա՞լ է. եղբորից եղբայր մարզպետի պաշտոն անցնելը նորմա՞լ է: Թեմա մի բացեք, ասեք՝ թող խելոք մնա: Այդքան բան»: Այս մասին այսօր՝մայիսի 13-ին, լրագրողների հետ զրույցում ասաց Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ սրբազանը՝ անդրադառնալով տավուշցի պատգամավոր, ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Վահե Ղալումյանի հայտարարությանը, որ ժամանակին սրբազանի հետ սուրճ էլ է խմել, հաց էլ է կերել, բայց հիմա «իր հիմնական գործը թողել, ուզում է զբաղվել քաղաքականությամբ»:

Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը լրագրողներին խնդրեց ճշտել, թե ինչ մասնագիտություն ունեն Վահե Ղալումյանն ու մյուսները, որոնք իրեն մեղադրում են իր գործով չզբաղվելու մեջ: «Խնդրում եմ, ով խոսում է՝ մեկիկ-մեկիկ նայեք, թե մասնագիտություններն ինչ են: Վահե Ղալումյանին հարցրեք, թե ի՞նչ մասնագետ է, տեսնենք՝ ինքն իր գործով զբաղվո՞ւմ է»,-ասաց նա:

Լրագրողներն ասացին, որ Վահե Ղալումյանն ավարտել է ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի տնտեսագիտական ֆակուլտետը, ինչին ի պատասխան Սրբազանն՝ ասաց. «Շատ պարզ է արդեն: Աշխատել է շինարարական կազմակերպությունում աշխղեկի օգնական: Բա տնտեսագետը ո՞նց է գնացել՝ աշխղեկի օգնական աշխատելու»:

ՍԱՄՍՈՆՅԱՆԻ ԵՎ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ

«Նարեկ Սամսոնյանի եւ Վազգեն Սաղաթելյանի գործով անպայմանորեն ԲԴԽ-ից եւ քաղաքական բարձր իշխանությունից հանձնարարություններ տրվել են»: Այս մասին լրագրողների հետ զրույցում նշեց Վազգեն Սաղաթելյանի փաստաբան Արսեն Բաբայանը:

«Այս որ ճնշումներ բոլոր դատավորների նկատմամբ, հաստատվել են վաղուց՝Նարեկի ու Վազգենի կալանքը, եւ ընդհանրապես այն, որ այս գործը գոյություն ունի մինչեւ հիմա, հաստատվել են դրանով: Թե կոնկրետ այս գործով ի՞նչ աստիճանի հանձնարարական է տրվել դատավորին, եւ նա ինչքանո՞վ է կարողացել հնարավոր հանձնարարությանը դիմադրել՝ չեմ կարող ասել», - ասաց Բաբայանը:

Թե ինչ սպասելիքներ կան, Բաբայանը նշեց. «Եթե կվերամակագրվի այնպիսի դատավորի, որը կունենա ուժ, արդարադատություն իրականացնելու իրական կարողություն, կարող ենք ակնկալել որոշակի հույսեր: Այս դատավորը կոնկրետ այդպիսին էր եւ ապացուցել էր նախկին դատական ակտով: Սակայն գտավ, որ ինքը չպետք է քննի այս գործը, որ կարող է հասարակության մոտ կասկած առաջանալ՝ իր անաչառության հետ կապված: Ափսոսում եմ, քանի որ փորձից գիտենք, որ գործ ունեինք արդարադատություն իրականացնող քիչ մնացած դատավորներից մեկի հետ»,-ասաց Բաբայանը:

Ա. ԻՍՊԻՐՅԱՆԸ ՎԱՅՐ Է ԴՐԵԼ ՄԱՆԴԱՏԸ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մայիսի 13-ին գումարել է արտահերթ նիստ: Նիստի օրակարգում Երեւանի քաղաքապետի՝ մայիսի 10-ին ԿԸՀ ուղարկած արձանագրությունն էր, որի համաձայն՝ Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արթուր Իսպիրյանի լիազորությունները վաղաժամ դադարել են: ԿԸՀ արձանագրությամբ, Երեւանի ավագանու անդամ է գրանցվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Քրիստինե Գագիկի Վարդանյանը:

ՓԱՍՏԱԲԱՆ Ռ. ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Փաստաբան Ռուբեն Մելիքյանը սոցցանցի իր էջում գրում է. «Հանրային լայն հաշտության օրակարգին ՔՊ-ական այս դեպուտատը պատասխանում է անհանդուրժողականություն հրահրելով:

Լավ չի, աղջիկ ջան, հեչ լավ չի: Ոչ երանի քեզ հետ սուրճ խմողին ... դժվար թե հաջողվի քեզ բան բացատրել»:

Ավելի ուշ՝ Հասմիկ Հակոբյանը գրառում արեց. «Սլովակիայում եմ գտնվում, մեկ ժամ առաջ ավարտեցինք շատ կարեւոր հանդիպում: Սա վստահ եմ ոչ մի սադրիչի ու բանսարկուի հետաքրքիր չէ:

Բայց ինչ եմ ուզում ասել, էդ նույն ժամին էս ֆեյք շարժման ֆեյք հրահանգիչները, իրենց ֆեյքերով ու քարոզչական «թաբլոիթներով» տարածում են՝ իբր ես հենց էդ ժամերին նման գրառում եմ կատարել:

Հ.Գ. Եթե աղբամանը ինքնանետվելու ցանկություն ունեք, ես, իհարկե, չեմ կարող ձեզ հակառակում համոզել, բայց ամեն դեպքում խորհուրդ չեմ տա:

Նաեւ կխնդրեմ լրագրող ընկերներիս սա եւս հրապարակել:

Մի բան էլ, հոլովելիս «ա»-ից եւ «ո»-ից հետո լսվող «յ»-ն գրվում է)) (մեքենաՅին)»:

ԵԱՀԿ–Ն ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ԵԱՀԿ-ն ողջունում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման գործընթացը, որը պետք է տեղի ունենա կառուցողական մթնոլորտում: Այս մասին Երեւանում կայացած մամուլի ասուլիսում հայտարարել է կազմակերպության ներկայիս նախագահ, Մալթայի արտգործնախարար Իեն Բորջը:

«Մենք աջակցում ենք Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման գործընթացին. բանակցային գործընթացը պետք է ընթանա վստահության, հավասարության մթնոլորտում: Տասնամյակներ տեւած եւ տառապանք պատճառած հակամարտությունը կարող է ավարտվել»,-ասել է նա:

«ՏԱՎՈՒՇԸ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ»

ԻՆՉՊԻՍԻ՞Ն ԷԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՕՐԵՐԸ

Մայիսի 4-ին սկսվեց Բագրատ Սրբազանի՝ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է՝ ինչպես սկսվեց սահմանազատման եւ սահմանագծման դեմ շարժումը:

2024 թվականի մարտի 19-ին Նիկոլ Փաշինյանն այցելեց Տավուշի մարզ, հանդիպեց տեղացիներին, գնաց Կիրանց, Ոսկեպար: Վարչապետը ներկաներին ցույց է տվել Հայաստանի ուրվագիծը եւ նշել, որ այն մեր իմացած Հայաստանի Հանրապետությունն է: «Սահմանազատման եւ սահմանագծման գործընթացը հետեւյալն է. սահմանագծման հանձնաժողովները պետք է գնան եւ տեղում որոշեն, թե որտեղ է սկսում Հայաստանի Հանրապետությունը, եւ դա պետք է դառնա Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանական Հանրապետության միջեւ պետական սահման»:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցից հետո, երբ հայտարարվեց սահմանազատման եւ սահմանագծման գործողությունների սկիզբը՝ ապրիլի 20-21-ը, Կիրանցի հատվածում ինտենսիվ փակ պահեցին դեպի գյուղ տանող ճանապարհը: Ոստիկանական ուժային գործողությունից հետո իրավապահները վաղ առավոտից հատուկ ռեժիմ էին սահմանել դեպի գյուղ տանող բոլոր ճանապարհների վրա: Կիրանց կարողանում էին մուտք գործել միայն տեղացիները, ընդ որում՝ նրանք ճանապարհին պարտավոր են ոստիկաններին ցույց տալ իրենց անձնագիրը, որում նշված է, որ բնակության վայրը Կիրանց գյուղն է:

Գյուղ մուտք գործել չհաջողվեց նաեւ հոգեւոր առաջնորդներին: Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանը, որն այդ օրերին Կիրանցում մասնակցում եւ առաջնորդում էր հավաքները, չկարողացավ գյուղ մտնել:

Համարելով, որ Կիրանցում սակավ թվով հանրահավաքը արդյունք չի ունենա՝ Բագրատ Սրբազանը հայտարարեց Կիրանցից քայլերթով մայրաքաղաք Երեւան գալու մասին, իսկ մայիսի 4-ին մեկնարկեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման երթը դեպի Երեւան:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման քայլերթ. օր առաջին՝ 4 մայիսի

«Տավուշը հանուն հայրենիքի» քայլերթի մեկնարկը, ինչպես արդեն ասացինք, տրվեց Կիրանցից: Առաջին կանգառը եղավ Հաղարծինի վանական համալիրում: Առավոտյան երթը դեպի Սեւան քաղաք մեկնարկեց աղոթքով:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման քայլերթ. օր երկրորդ՝ 5 մայիսի

Շարժումը մեկնարկեց Սեւան քաղաքից՝ Սեւանավանք եւ թերակղզի տանող ճանապարհահատվածից: Շարժման առաջին օրերին պահանջներ չդրվեցին եւ նպատակակետը մայրաքաղաք հասնելու՝ կարծես թե սահմանագծման եւ սահմանազատման դեմ պայքարն էր, սակայն այն լողզված պահանջ էր դեռ: Առաջին գիշերը անցավ բաց երկնքի տակ Սեւան քաղաքում:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման քայլերթ՝ օր երրորդ. 6 մայիսի

Շարժմանը շարունակաբար միանում էին քաղաքական եւ մշակութային գործիչներ, նախկին եւ ներկա քաղաքական հայտնի դեմքեր միանում էին Բագրատ սրբազանի գլխավորած շարժմանը՝ հայտնելով իրենց աջակցությունը:

Երկրորդ օրը քայլերթի ուղին դեպի Հրազդան քաղաք էր: Այս օրերին, հարցին, թե ինչ ակնկալիքներ ունեն երթից, Բագրատ Սրբազանը սահմանեց՝ «Սա չակնկալիքների շարժում է»:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման քայլերթ. օր չորրորդ՝ 7 մայիսի

Շարժումը բավականաչափ հնչեղություն էր ստացել, սակայն հարցին՝արդյոք նպատակ կձեւավորվի պահանջելու ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշիյանի հրաժարականի վերաբերյալ, միեւնույնն է, հնչում էին բացասական կամ խուսափողական պատասխաններ: Քայլերթը շարժվեց դեպի քաղաք Չարենցավան: Իշխանությունը, ամբողջ լծակներն օգտագործելով, փորձեր էր անում անվանազրկել Բագրատ սրբազանին, «ռուսի գործակալներ» էր անվանում բոլոր նրանց, ովքեր միանում, սատարում եւ նույնիսկ լուսաբանում էին «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման երթը դեպի Երեւան:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման քայլերթ. օր հինգերորդ՝ 8 մայիսի

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման քայլերթը Չարենցավանից հասավ Աբովյան քաղաք: Երթի ամբողջ ընթացքում ոստիկանական ուժերն ուղեկցում էին մասնակիցներին, հորդորում ոչ մի ավելորդ քայլ չանել: Աբովյանում Սրբազանի առաջնորդած քայլերթին միացան եւ դիմավորեցին մի խումբ քաղաքացիներ, Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել Արքեպիսկոպոս Աջապահյանը: Սրբազանի առաջնորդած քայլերթին ընդառաջ եկան նաեւ երիտասարդները՝ Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի ուղեկցությամբ:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման քայլերթ. օր վեցերորդ՝ 9 մայիսի

Առավոտյան՝ ժամը 11:00-ին, մեկնարկեց Աբովյանից դեպի Երեւան քայլերթը: Մինչ Բագրատ Սրբազանի Երեւան հասնելը՝ խմբերով տարբեր կառույցներ սպասում, միանում եւ աջակցություն էին հայտնում շարժմանը: Իշխանությունները, թեպետ հակառակ թեզեր էին շրջանառում՝ հուսալով, որ շատերը չեն միանա Բագրատ Սրբազանի երթին. այնուամենայնիվ, անասելի եւ անսպասելի մարդաշատ էր երթը: Հանրապետության Հրապարակը մարդաշատ էր, բոլորը սպասում էին երթի ժամանմանը: Հրապարակ հասնելուն պես՝ Բագրատ Սրբազանը Նիկոլ Փաշինյանին մեկ ժամ ժամանակ տվեց հրաժարական ներկայացնելու համար: Ժամը 20:00-ին Բագրատ Սրբազանը ժամանակն ավելացրեց եւս 15 րոպեով: Իշխանական թեւը վախվորած, ինչպես իրենք են սիրում ասել՝ հոգեվարքի մեջ, սկսեցին նոր չելենջ. մեկ մարդու պես բոլոր ՔՊ-ականները տարածեցին Նիկոլ Փաշինյանի լուսանկարները՝ վերտառությամբ՝ «Մեր պատասխանը Բագրատին՝ ՀՀ ընտրված վարչապետ»:

Նիկոլ Փաշինյանից այս ընթացքում ոչ մի ձայն չլսվեց:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժում. օր յոթերորդ՝ 10 մայիսի

Բագրատ Սրբազանի առաջնորդած շարժումը առավոտյան քայլերթը նորից սկսեց, սակայն այս անգամ ամբողջ մարաքաղաքով: Քայլերթին միացան ուսանողները, սկսվեց համատարած դասադուլ: Երեկոյան կրկին մարդաշատ հանրահավաք կազմակերպվեց Հանրապետության Հրապարակում: Շաբաթ օրը հայտարարվեց հանգստի օր, սակայն քաղաքացիները, ինքնաբուխ ակցիաներ իրականացնելով, մի քանի գլխավոր փողոցներ փակեցին: Արդյունքում՝ ժամը 14:50-ի դրությամբ, ձերբակալված էր 48 քաղաքացի:

Այս ամբողջ ընթացքում քայլերթը սկսվեց, եւ շարունակվում էր իշխանական սադրողական կոչերով եւ բոլորին «նարկոբարոններ» եւ «արտասահմանյան գործակալներ» անվանելով:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժում. օր ութերորդ՝ 11 մայիսի

Երեւանում եւ մարզերում տեղի են ունեցել խաղաղ անհնազանդության ակցիաներ, որոնց ընթացքում ոստիկանները հաճախ անհամաչափ ուժ են կիրառել: Այդ ընթացքում շարժման առաջնորդները հանդիպումներ են ունեցել ընդդիմադիր տարբեր ուժերի, կազմակերպությունների եւ մասնագիտական խմբերի հետ՝ի մի բերելու հետագա ծրագրերն ու հասարակությանը հստակ քայլեր ներկայացնելու նպատակով:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժում. օր իններորդ՝ 12 մայիսի

Երեկոյան՝ժամը 17:00-ին, երիտասարդները ուրարակիր Թովմաս առաքելյանի ուղեկցությամբ երթով շարժվեցին դեպի հրապարակ: 18:30-ին Հանրապետության հրապարակում մեկնարկեց հանրահավաքը, որի ընթացքում մասնագիտական խմբերի ներկայացուցիչները խոսեցին ծրագրային ընթացքից, իրավական կետերից եւ հետագա անելիքներից:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժում. օր տասներորդ՝ 13 մայիսի

Առավոտյան՝ ժամը 09:00-ից, մայրաքաղաքի եւ մարզերի տարբեր կետերում մեկնարկեցին անհնազանդության ակցիաները: Սրբազանն այցելեց գրողների եւ նկարիչների միություններ, եղավ Գիտությունների ազգային ակադեմիայում: Երեկոյան՝ ժամը 19:30-ին, քաղաքացիների հետ հանդիպում ունեցավ Սուրբ Աննա եկեղեցու բակում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄՆԱԿՑԵԼ ԵՆ ՆԱԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐ

Մայիսի 11-ին՝ ժամը 21:25-ի սահմաններում, ոստիկանության կենտրոնական բաժին հաղորդում է ստացվել, որ իրենց է զանգահարել անհայտ քաղաքացի եւ հայտնել, որ Արամի փողոցի 3 հասցեի մոտ ծեծկռտուք է:

Նույն օրը՝ժամը 21:45-ի սահմաններում, ՀՀ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հերթական ահազանգն է ստացվել, որ Աբովյան 1/3 հասցեում գործող «Բլեք Սթար Բուրգեր»-ի դիմաց անհայտ անձը դանակահարել է մոտ 30 տարեկան տղամարդու:

Որոշ ժամանակ անց «Նաիրի» բժշկական կենտրոնից է զանգ ստացվել այն մասին, որ Հյուսիսային պողոտայում տեղի ունեցած դանակահարության հետեւանքով «կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած վերք» ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել մի քաղաքացի:

Հիվանդանոց են մեկնել ոստիկանության խմբերը, բժիշկները հայտնել են, որ վիրավորը ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու, քանի որ գտնվում է վիրահատարանում:

Ոստիկանները պարզել են, որ վիրավորը Երեւանի բնակիչ 31-ամյա Կարեն Ա.-ն է:

Ոստիկանության կենտրոնական բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողների ձեռնարկած օպերատիվ հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ նույն օրը՝ժամը 21:20-ի սահմաններում, Հյուսիսային պողոտա 11 հասցեի կայանատեղիում Կարեն Ա.-ի ընկերուհու վերաբերյալ առաջացած հարցի շուրջ իր ընկերներ, Արարատի մարզի բնակիչ 26-ամյա Անդրանիկ Դ.-ի, Երեւանի բնակիչներ 30-ամյա Մայիս Հ.-ի եւ 30-ամյա Սամվել Բ.-ի հետ վիճաբանել են Երեւանի բնակիչներ 21-ամյա Դավիթ Ա.-ի, 17-ամյա Դավիթ Մ.-ի, Շիրակի մարզի բնակիչ 13-ամյա Ալեն Ք.-ի եւ ոմն Մուրադի հետ, որի ժամանակ վերջիններս, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց, իսկ Դավիթ Ա.-ն իր մոտ եղած սուր կտրող-ծակող առարկայով հարվածել է Կարեն Ա.-ին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Ոստիկանների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ՝ նույն օրը՝ երեկոյան, Անդրանիկ Դ.-ն եւ Մայիս Հ.-ն խուլիգանություն կատարելու եւ մարմնական վնասվածք հասցնելու կասկածով ձերբակալվել եւ տեղափոխվել են ոստիկանության կենտրոնական բաժին, իսկ Սամվել Բ.-ն ինքնակամ է ներկայացել, որտեղ ձերբակալվել է:

Ձեռնարկվում են անհրաժեշտ օպերատիվ հետախուզական միջոցառումներ՝ ոմն Մուրադի ինքնությունը պարզելու, վերջինիս, դեպքի մյուս մասնակիցներին եւ հանցագործության գործիքը հայտնաբերելու ուղղությամբ:

Դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ «ԿԱՄԱԶ»-Ի ՎԱՐՈՐԴԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մայիսի 9-ի գիշերը «Կամազ» մակնիշի մեքենայով Հանրապետության Հրապարակ մտած քաղաքացուն մեղադրանք է առաջադրվել: Խափանման միջոց է ընտրվել երկրից չբացակայելը:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ մեր տեղեկությունների համաձայն՝ հրապարակում քաղաքացիների վրա ներխուժած բեռնատարի վարորդը Արարատի մարզի Ջրահովիտ գյուղի բնակիչ Կարեն Ղազարյանն է:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝նա իրավապահներին պատմել է, որ ինքը «Կամազ»-ով եկել էր՝միանալու ցուցարարներին: Հիշեցնենք, որ «Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնության կողմից անցկացվող հանրահավաքի ընթացքում անհայտ անձը «Կամազ» մակնիշի բեռնատար ավտոմեքենան վարել է հանրահավաքի մասնակիցների ուղղությամբ:

Վարորդը դեպքի վայրում ձերբակալվել է ոստիկանության ծառայողների կողմից՝ առերեւույթ հանցավոր արարք կատարելու կասկածանքով: Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի (խուլիգանություն) 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ

Ոստիկանության Մասիսի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ մայիսի 11-ին՝ ժամը 19:10-ին, Մասիս քաղաքի Հերացու փողոցում հանդիպակաց երթեւեկել են «ՎԱԶ-2112», «Շեվրոլե Վոլտ» եւ «Օպել» մակնիշի մեքենաներ, ինչից հետո «ՎԱԶ-2112»-ից եւ «Օպելից» իջել են մի խումբ անձինք եւ, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով եւ հայհոյանքներ հնչեցնելով, փայտերով եւ մահակներով սկսել են հարվածել «Շեվրոլե Վոլտ» մեքենայում գտնվողներին, իսկ այդ ընթացքում գազային ատրճանակից կրակոցներ են արձակվել:

Ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են խուլիգանության մասնակիցների ինքնությունը. ութ երիտասարդն էլ Կաթնաղբյուր գյուղի բնակիչ են: Պարզվել է, որ նրանք անձնական հարցի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ փայտերով եւ մահակներով հարվածներ են հասցրել «Շեւրոլե Վոլտի» վարորդին, նա էլ գազային ատրճանակից կրակոցներ է արձակել:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է երեք պարկուճ:

Մայիսի 12-ին «ՎԱԶ-2112»-ի վարորդը՝ Կաթնաղբյուր գյուղի բնակիչ 22-ամյա երիտասարդը, հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Մասիսի բաժին: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ հանցագործության մյուս մասնակիցներին եւ գազային ատրճանակը հայտնաբերելու ուղղությամբ:

Մասիսի քննչական բաժնում քրեական վարույթ է նախաձեռնվել:

ԼՈՒՐԵՐ

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՒՄ ԷՐ ՌԴ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզները ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ մայիսի 12-ին Երեւան-Տյումեն չվերթի հաշվառումից հետո գծային բաժին են տարել 55-ամյա Ռուդիկ Ե.-ին: Նա 2020 թվականի սեպտեմբերի 1-ից Ռուսաստանի Դաշնության Տյումեն քաղաքի ոստիկանության կողմից հետախուզվում էր խարդախության մեղադրանքով:

Խափանման միջոցը՝ ստորագրություն:

Հայտնաբերման մասին հայտնվել է հետախուզումը նախաձեռնողին եւ դատախազությանը:

ԿՐԱԿՈՑՆԵՐ ՔԱՍԱԽՈՒՄ

Մայիսի 11-ին՝ ժամը 17:25-ի սահմաններում, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Քասախ գյուղում կրակոցներ են հնչել, եւ մի տղամարդ ավտոմատը ձեռքին շրջում է:

Ինչպես հայտնում է Shamshyan.com-ը, ստացված տեղեկություններն իրացնելիս պարզվել է, որ մայիսի 10-ին Կոտայքի մարզի բնակիչ 29-ամյա Վազգեն Ք.-ն հեռախոսով անձնական հարցերի շուրջ վիճաբանել է Կոտայքի մարզի բնակիչ 28-ամյա Ալեքսան Մ.-ի հետ եւ հայհոյել վերջինիս, ապա իր սեփական անձի առավելությունն ընդգծելու մոլուցքով մայիսի 11-ին՝ժամը 15:20-ի սահմաններում, Քասախ գյուղի Ռ. Սաֆարյան փողոցում հանդիպել է Ալեքսան Մ.-ին, որի ժամանակ Վազգեն Ք.-ն իր մոտ ապօրինի պահվող «ԱԿՍ» տեսակի ինքնաձիգից մի քանի անգամ անկանոն կրակոցներ է արձակել եւ այդ կերպ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ բացահայտ ոչ հարգալից վերաբերմունք ցուցաբերել, չնչին առիթն օգտագործել է եւ իր կողմից ապօրինի պահվող «ԱԿՍ» տեսակի ինքնաձիգից կրակոցներ արձակելու միջոցով 15-20 րոպե տեւողությամբ խուլիգանական դրդումներով խախտել հասարակական կարգը:

Ոստիկանությունը ձեռնարկում է միջոցառումներ՝ Վազգեն Ք.-ին եւ վերջինիս կողմից ապօրինի պահվող «ԱԿՍ» տեսակի ինքնաձիգը հայտնաբերելու ուղղությամբ:

Դեպքի փաստով ոստիկանության Նաիրիի բաժնում կազմվել են փաստաթղթեր, որոնք փոխանցվել են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Նաիրիի քննչական բաժին, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մայիսի 10-ից 13-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 181 դեպք, որից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԸ ՄՄԽԵ՞Լ Է ԾԱԽՍԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ

2023 թվականի աշնանը Արցախից բռնագաղթած, Տավուշի մարզում հաստատված 2970 արցախցիների հյուրատնային ծախսերի համար, ըստ Տավուշի մարզպետարանից ստացված տվյալների, պետական բյուջեից ծախսվել է 216.8 միլիոն դրամ: Տեղեկատվական հարցում ենք ուղարկել Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին՝խնդրելով հայտնել, թե այդ 216.8 միլիոն դրամը արցախցիներին հյուրատնային ծառայություններ մատուցած ո՞ր կազմակերպություններին, յուրաքանչյուրին ի՞նչ չափով է հատկացվել: Մարզպետը մերժել է տրամադրել այդ տեղեկությունը՝ դա համարելով առեւտրային գաղտնիք: Պետական բյուջեի գումարների հատկացումը ո՞նց կարող է առեւտրային գաղտնիք լինել. մայիսի 3-ին մարզպետին նոր հարցում ենք ուղարկել՝ խնդրելով պատասխանել հարցին՝ նշված տեղեկությունը առեւտրային գաղտնիք համարելը Ձեր անձնակա՞ն կարծիքն է, թե՞ մարզպետարանի իրավաբանական բաժնի, պատրա՞ստ եք այդ տեղեկությունը առեւտրային գաղտնիք համարելը եւ այդ հիմքով այն չտրամադրելը հիմնավորել դատարանում: Մարզպետը պատասխանել է մայիսի 3-ին ուղարկված տեղեկատվական հարցման բոլոր հարցերին, սակայն միտումնավոր անտեսելով՝ չի պատասխանել այդ հարցին: Հայկ Ղալումյանը ինչո՞ւ է խուսափում հիշյալ հարցին պատասխանելուց. մարզպետը մսխե՞լ է Արցախից բռնագաղթածների հյուրատնային ծախսերի գումարը:

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ, ՈՉ ԹԵ ՏԱՎՈՒՇԻ

Տավուշի մարզը կազմված է 4 խոշոր համայնքներից՝ Իջեւան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան: Տավուշի մարզպետարանի ութ տասնյակ աշխատակիցների մեջ Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան համայնքների ոչ մի բնակիչ չկա, բոլորը իջեւանցիներ են: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցադրում ենք արել, թե ե՞րբ են Տավուշի մարզպետարանի աշխատակազմում աշխատելու Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ համայնքների բնակիչներ: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում թափուր հաստիքները համալրվում են մրցույթի արդյունքում: Թափուր հաստիքների վերաբերյալ հայտարարությունները տեղադրվում են ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջում եւ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կայքէջում: Հայտարարված մրցույթներին առ այսօր Ձեր կողմից նշված տարածքներից դիմորդներ չեն եղել»: Ահա այսպիսի «շատ համոզիչ» պատասխան, որի մեջ էլ վարչապետ բառն էլ, անհիմն կերպով, մեծատառով է գրել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Բուժաշխատողների համար նախատեսվում է սահմանել պարտադիր շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների ցանկ: Գործադիրը մայիսի 8-ի նիստում հավանության է արժանացրել «Քնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Ակնկալվում է առանձին կարեւորություն պահանջող դասընթացների ցանկ սահմանել բուժաշխատողների համար: Որպես օրինակ կարող է լինել արտակարգ իրավիճակներում, աղետների ժամանակ տուժածներին ցուցաբերվող անհետաձգելի բուժօգնության կամ օրինակ բուժաշխատողների մասնագիտական էթիկայի կանոնների վերաբերյալ դասընթացները: Դրանից բացի՝ կարող են լինել համաճարակային իրավիճակներում վարքականոններին վերաբերող դասընթացները եւ այլն:

Առողջապահության ազգային ինստիտուտի տնօրենի խորհրդական Կարինե Աբրահամյանը նշեց, որ այսօր էլ բուժաշխատողները յուրաքանչյուր հնգամյա շրջափուլում շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտներ հավաքելու համար մասնակցում են դասընթացների. սակայն փորձը ցույց է տալիս, որ հիմնականում բուժաշխատողներն ընտրում են իրենց մասնագիտությանն անմիջական առնչվող դասընթացները:

«Փորձը ցույց է տալիս, որ բուժաշխատողները կրեդիտները ձեռք են բերում՝ իրենց մասնագիտությանը համապատասխան դասընթացներին մասնակցելով: Քանի որ դասընթաց ընտրելը կամավորության սկզբունքով է, հետեւաբար՝ բուժաշխատողը ինքն է որոշում՝ ինչ դասընթաց ընտրի ու այդ դեպքում հնարավոր է, որ, օրինակ, աղետների բժշկության դասընթացին չմասնակցեն: Այս նախագծի նպատակն այն է, որ տվյալ իրավիճակի վերլուծությունից ելնելով՝ արտակարգ դեպքեր, համաճարակ, կպահանջվեն կոնկրետ դասընթացներ, ու դրանք կներառվեն պարտադիր ցանկում», - ասաց Կարինե Աբրահամյանը:

ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Բազարչյանը նշեց, որ պարտադիր դասընթացների ցանկը սահմանելու է ՀՀ կառավարությունը: Դասընթացների ցանկը քարացած չի լինելու, այն ժամանակի ընթացքում փոփոխման ենթակա է: Նախագծով առաջարկվում է նաեւ օտարերկրյա եւ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների մասնակցության համար սահմանել փոխհատուցման կարգ եւ փոխհատուցման ենթակա դեպքեր, որի հաստատման լիազորությունը վերապահված է կառավարությանը:

«Հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող դասընթացները հասանելի կլինեն բուժաշխատողների համար, պետությունը կվճարի այդ մասնակցության համար: Հատկապես մեր մարզային բուժաշխատողները հնարավորություն կունենան համաշխարհային բժշկության շարժերին ծանոթանալ՝մասնակցելով հեղինակավոր միջազգային կառույցների կողմից կազմակերպվող դասընթացներին»,-ասաց Ալեքսանդր Բազարչյանը:

Մասնագետներն ընդգծում են, որ այս նոր մոտեցմամբ բուժաշխատողները կլինեն ավելի պատրաստված, նրանց հնարավորություններն ու կարողությունները կզարգանան, իսկ բուժառուն միայն կշահի դրանից: Շարունակական մասնագիտական զարգացման պարտադիր դասընթացների մասնակցությունը հավելյալ ֆինանսական ծանրաբեռնվածություն չի նախատեսվում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՆՈՒԺԵՂ ՓՈԹՈՐԻԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Մայիսի 11-ի ուժեղ մագնիսական փոթորիկը միայն փոքր խափանումներ է առաջացրել էլեկտրացանցում, կապի համակարգերում եւ արբանյակներում:

Մայիսի 11-ի առավոտյան SpaceX-ի Starlink արբանյակային ինտերնետային ծառայության կայքը հայտնել է, որ ծառայության որակը վատացել է: Բայց, ի վերջո, փոթորիկը էական վնաս չի պատճառել: ԱՄՆ Արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալությունը (FEMA) եւ Էներգետիկայի նախարարությունը հայտնել են, որ երկրի ոչ մի տարածաշրջան չի հաղորդել մագնիսական փոթորկի զգալի ազդեցությունների մասին: Այնուամենայնիվ, հյուսիսափայլի վառ մանուշակագույն, կանաչ, դեղին եւ վարդագույն երանգները նկատվել են ամբողջ աշխարհում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Չինաստանում, Անգլիայում, Իսպանիայում եւ այլ երկրներում:

Մարդկության պատմության մեջ ամենահզոր մագնիսական փոթորիկը տեղի է ունեցել 1859 թվականին: Այն առաջացրել է բեւեռափայլեր Կենտրոնական Ամերիկայում եւ, հնարավոր է, նույնիսկ Հավայան կղզիներում: Նման իրադարձությունը կարող է վնասել բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերին եւ արբանյակներին, որոնք հիմնված են Երկրի վրա նավիգացիոն եւ հաղորդակցության ծառայությունների վրա:

ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Հայաստանի Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը մայիսի 13-ի նիստում ընդունել է «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու եւ դրանցով համալրված փաթեթի օրենքի նախագիծը: Օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ իր առաջարկներն է ներկայացրել ՔՊ խմբակցության պատգամավոր Արուսյակ Մանավազյանը:

Նա առաջարկել է Հաշվեքննիչ պալատում ծառայությունը ներդնել՝ որպես պետական ծառայության նոր տեսակ եւ սահմանել դրան անցնելու իրավական կառուցակարգերը: Արուսյակ Մանավազյանի հաջորդ առաջարկը վերաբերում էր՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագծի 8-րդ հոդվածում սահմանել, որ իրավաբանական անձանց ստուգման՝ Հաշվեքննիչ պալատի գործառույթը չի տարածվում ՀՀ օրենքով անորոշ թվով հասցեատերերի համար սահմանված հարկային արտոնությունների վրա:

Պատգամավոր Ծովինար Վարդանյանը նշել է, որ սրանով Հաշվեքննիչ պալատի մասին օրենքում փոփոխություններ են կատարվում, որոնք սահմանում են Հաշվեքննիչ պալատի կարողությունները եւ լիազորությունները: Դրանք, ըստ նրա, կուժեղացնեն նաեւ ԱԺ պատգամավորների հնարավորությունները՝ կառավարության նկատմամբ իրենց վերահսկողական գործառույթը կատարելու առումով:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԼԻՆԻ

Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը գեղարվեստական լուսավորություն կունենա: Այս մասին նշվել է այսօր՝ մայիսի 13-ին, Երեւանի քաղաքապետարանի աշխատանքային հերթական խորհրդակցության ժամանակ: Նախագիծը դեռեւս քննարկման փուլում է: Գեղարվեստական լուսավորությամբ կապահովվի նաեւ «Մայր Հայաստան» հուշարձանը: Բացի այդ, նշվել է, որ Նորք-Մարաշ վարչական շրջանում կկանաչապատվի շուրջ 10 հա տարածք, կանցկացվի ոռոգման նոր համակարգ:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 39 պատահար. 2 մարդ զոհվել է, 50-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ozon–Ը ԱՌԱՔՈՒՄ ԿԳՈՐԾԱՐԿԻ

Հայաստանում Ozon-ը հայտարարում է ասյտեղ սեփական սուրհանդակային առաքման մեկնարկի մասին. Երեւանի բնակիչներն այսուհետ կարող են ստանալ իրենց ապրանքները Ozon-ի առաքիչների միջոցով՝ առանց տնից դուրս գալու:

Նախկինում Հայաստանի բնակիչները պատվիրված ապրանքները կարող էին ստանալ կամ բրենդավորված Ozon-ի պատվերների հանձնման կետերից կամ Հայփոստի բաժանմունքներից, կամ Հայփոստի՝ վճարովի առաքման տարբերակով: Այժմ կայքում կամ հավելվածում պատվեր կատարելիս հաճախորդները կարող են ընտրել առաքում Ozon սուրհանդակի միջոցով: Սուրհանդակը կառաքի ապրանքը նշված հասցեով՝նախապես զանգահարելով եւ տեղեկացնելով առաքման ժամի մասին: Նոր ծառայությունն առայժմ հասանելի է միայն Երեւանի բնակիչներին:

Ozon սուրհանդակային առաքման համար պատվերի նվազագույն արժեքը 4800 ՀՀ դրամ է: 4800-ից 17000 դրամ արժեցող պատվերների դեպքում առաքումը կարժենա 1500 դրամ: 17000-ից ավելի արժողությամբ պատվերների դեպքում առաքումը կլինի անվճար:

«Հայաստանի բնակչության շրջանում աճում է հետաքրքրությունը առցանց գնումների նկատմամբ. այժմ Ozon-ում հայաստանյան օգտատերերն օրական 5000-ից ավելի պատվեր են գրանցում: Մենք մշտապես ձգտում ենք բարելավել մեր ծառայությունները, շարունակում ենք աշխատել լոգիստիկ ցանցի ընդլայնման եւ պատվերների ստացման գործընթացների օպտիմալացման ուղղությամբ: Ozon-ի սեփական սուրհանդակային առաքման ծառայության գործարկումը եւս մեկ քայլ է գնումների մատչելիության բարձրացման եւ «Մարքեթփլեյսում» հաճախորդների սպասարկման բարելավման ուղղությամբ», - ասաց «Ozon Հայաստան»-ի կոմերցիոն տնօրեն Աշոտ Հախվերդյանը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ». ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի հաճախորդներ,

տեղեկացնում ենք, որ «Յունիբանկի» Բագրատունյաց մասնաճյուղում /հասցե՝ Երեւան, Բագրատունյաց 22/2, 54/ 08.05.2024թ.-02.08.2024թ. ներառյալ իրականացվելու են վերանորոգման աշխատանքներ, որոնց պատճառով նշված ժամանակահատվածում հաճախորդների սպասարկում չի իրականացվի: Բագրատունյաց մասնաճյուղն իր աշխատանքը կվերսկսի 05.08.2024թ.-ից:

Հայցում ենք Ձեր ներողամտությունը պատճառած անհարմարությունների համար եւ առաջարկում այդ ժամանակահատվածում սպասարկվել «Յունիբանկի» մոտակա՝ «Հայրենիք» մասնաճյուղում /Երեւան, Գարեգին Նժդեհ 34, 4/1/:

Տեղեկատու կենտրոն՝ +374 10 59 55 55:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՎԶԵԲ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ

ՀԱՄԱՀՈՒՆՉ՝ ԲԱՆԿԻ ՈՐԴԵԳՐԱԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

«Կոնվերս բանկը» ՎԶԵԲ տարեկան ժողովի գլխավոր հովանավորն է: Ձեզ ենք ներկայացնում միջոցառմանը բանկի մասնակցության ձեւաչափի, սոցիալապես պատասխանատու ֆինանսավորման ոլորտում մասնակցության եւ միջոցառումից ակնկալիքների մասին զրույցը՝ բանկի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն Հրանտ Հակոբյանի հետ:

-ՎԶԵԲ-ի հետ «Կոնվերս բանկը» համագործակցության հարուստ փորձառություն ունի, ո՞ր ոլորտներն է ընդգրկել երկկողմ համագործակցությունը, եւ ինչպե՞ս կբնորոշեք այն:

-«Կոնվերս բանկը» ՎԶԵԲ-ի հետ երկարամյա արդյունավետ եւ ընդգրկուն համագործակցության փորձ ունի, որի շրջանակում բանկի կողմից Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր են իրականացվել: Բանկը ՎԶԵԲ-ի հետ ակտիվ համագործակցում է միջազգային առեւտրի խթանման եւ ՓՄՁ-ների ֆինանսավորման ոլորտում: Մասնավորապես՝ ներգրավված ռեսուրսների շնորհիվ հաջողությամբ իրականացվել է «Կանայք բիզնեսում» ներառական ծրագիրը, ինչպես նաեւ ՓՄՁ ֆինանսավորման ծրագիր:

Դրանց շնորհիվ գրանցված արդյունքները բարձր են գնահատվել հենց ՎԶԵԲ-ի կողմից, ինչի շնորհիվ «Կոնվերս բանկը» երկու անգամ արժանացել է «Տարվա Գործարք - Կանաչ Առեւտուր» մրցանակին, իսկ ՓՄՁ ֆինանսավորման ոլորտում՝ «ՎԶԵԲ-ի կարեւոր գործընկեր» պատվավոր մրցանակին:

ՎԶԵԲ-ի հետ համագործակցում ենք նաեւ մասնագիտական կարողությունների զարգացման եւ տեխնիկական աջակցության ծրագրերի շրջանակում:

-Ի՞նչ ձեւաչափով է բանկը մասնակցում տարեկան ժողովին, եւ ինչո՞վ է կարեւորվում բանկի մասնակցությունը համաշխարհային մակարդակով այդ կարեւոր միջոցառմանը:

-ՎԶԵԲ տարեկան ժողովը համաշխարհային մակարդակով տնտեսական կարեւորագույն միջոցառումներից է, որը հնարավորություն է տալիս հաղորդակցվել միջազգային ֆինանսական հանրության կողմից ընդունված, հեղինակություն վայելող մասնագետների հետ, ինչպես նաեւ ՎԶԵԲ ծրագրերում ներգրավված իրական հատվածի ընկերությունների ներկայացուցիչների հետ:

Միաժամանակ, սա շատ պարտավորեցնող միջոցառում է հուզական տեսանկյունից, քանի որ դրա շնորհիվ ՀՀ-ն հայտնվում է համաշխարհային ֆինանսական աշխարհի քարտեզում:

ՎԶԵԲ 2024թ. տարեկան ժողովին «Կոնվերս բանկը» մասնակցում է ոչ միայն որպես հայաստանյան ֆինանսական հատվածի ներկայացուցիչ, այլեւ որպես միջոցառման գլխավոր հովանավոր (Major sponsor): Նման մասշտաբի միջոցառման մասնակցությունը համահունչ է բանկի որդեգրած ռազմավարությանը՝ առկա մարտահրավերներին դիմակայելու, ռիսկերը զսպելու եւ բանկի հետագա զարգացման նպատակով միջազգային եւ արտասահմանյան կառույցների հետ սերտ համագործակցության առումով:

-Տարեկան ժողովի շրջանակում անցկացվելու է «Ազդեցության համատեղ գործադրում» (Delivering Impact Together) խորագրով գործարար համաժողով՝ կառուցելով միասնականության, համատեղ conversebank.am ջանքերի գործադրումն առավելագույն արդյունքի հասնելու համար: Ինչպե՞ս եք տեսնում «Կոնվերս բանկի» տեղն ու դերը այս հայեցակարգում, տեսլականում, եւ ի՞նչ պատասխանատվություն է պատրաստ ստանձնել բանկը:

-Delivering Impact Together՝ համատեղ, միասնական օրակարգ եւ ջանքեր մարտահրավերները հաղթահարելու համար:

Համաշխարհային տնտեսության առջեւ այսօր ծառացած են այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, կիբերանվտանգությունը, աշխարհաքաղաքական վերջին զարգացումները, որոնց դժվար է դիմակայել ինքնուրույն եւ մեկուսի: Նշված մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է մոբիլիզացնել համաշխարհային գիտելիքն ու փորձառությունը, ստեղծել փորձի փոխանակման եւ համագործակցության հնարավորություններ եւ հարթակներ:

Այս առումով կարեւորում եմ ՎԶԵԲ տարեկան ժողովի շրջանակում անցկացվելիք գործարար համաժողովը, որը նոր կապերի եւ նոր համագործակցությունների հնարավորություններ է ընձեռում մասնակիցներին: Մշտապես ներկայացված լինելով միջազգային հարթակներում՝ «Կոնվերս բանկն» առաջնորդվում է հաճախորդների պահանջմունքները լավագույնս բավարարելու սկզբունքով՝ ձգտելով նրանց համար ստեղծել անհատական եւ նորարարական լուծումներ, տրամադրել բիզնեսի զարգացման հնարավորություններ եւ ֆինանսական ռեսուրսների հասանելիություն:

-Կայուն, սոցիալապես պատասխանատու բիզնեսի կայացման հարցում ինչպիսի՞ն է «Կոնվերս բանկի» ռազմավարությունը: Պրոդուկտների մշակման գործընթացում ինչպիսի՞ նշանակություն է տրվում սոցիալապես պատասխանատու, կայուն ֆինանսավորմանը եւ բանկային ծառայությունների հասանելիությանը:

-Սոցիալապես պատասխանատու ֆինանսավորումը, ներառականությունը, կլիմայական եւ բնապահպանական ռիսկերի զսպումը ֆինանսավորման գործընթացում «Կոնվերս բանկի» ռազմավարական առաջնահերթություններից են:

Ելնելով այս հանձնառությունից՝ բանկում ներդրել ենք բնապահպանական, սոցիալական եւ կառավարչական մի շարք սկզբունքներ, որոնց վրա էլ հիմնված են պրոդուկտների մշակման գործընթացները: Այս ոլորտում նույնպես «Կոնվերս բանկը» սերտորեն համագործակցում է ՎԶԵԲ-ի եւ մյուս ինստիտուցիոնալ գործընկերների հետ: Մասնավորապես՝ ցանկանում եմ նշել ՎԶԵԲ-ի կողմից իրականացվող Climate Practices and Transition Planning ծրագրին բանկի համապատասխան աշխատակիցների մասնակցությունը, որի նպատակն է կլիմայական ռիսկերի կառավարման եւ անցումային պլանավորման (transition planning) ոլորտում ձեռք բերել գիտելիքներ եւ պրակտիկ հմտություններ:

-Ի՞նչ ակնկալիքներ ունեք միջոցառումից եւ համագործակցության ինչպիսի՞ հեռանկարներ եք տեսնում ՎԶԵԲ-ի հետ:

-ՎԶԵԲ-ը «Կոնվերս բանկի» ռազմավարական գործընկերն է: Մենք ակնկալում ենք շարունակական գործընկերային նոր մակարդակ, մասնակցություն ավելի մեծ թվով նախագծերի:

ՎԶԵԲ-ի տարեկան ժողովը հրաշալի հարթակ է համաշխարհային տնտեսական եւ ֆինանսական զարգացումների մասին տեղեկանալու, առկա մարտահրավերների եւ ռիսկերի զսպման մեխանիզմների conversebank.am-ի վերբերյալ քննարկումներին մասնակցելու, ինչպես նաեւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների եւ օտարերկրյա բանկերի հետ հարաբերությունների ստեղծման եւ ընդլայնման համար: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի եւս ակնկալում ենք մասնակցության բարձր ցուցանիշ եւ համագործակցության նոր հնարավորություններ:

Մենք բարձր ենք գնահատում ՎԶԵԲ-ի հետ մեր երկարամյա գործընկերությունը եւ հուսով ենք, որ այն լինելու է շարունակական՝ ընդգրկելով ոչ միայն համագործակցության տրադիցիոն ոլորտները, այլ նաեւ ժամանակի պահանջներին եւ մարտահրավերներին համահունչ այլ ծրագրերի շրջանակում գործընկերությունը:

Վստահ ենք, որ այս միջոցառման շնորհիվ Հայաստանում կստեղծվեն, կձեւավորվեն ամուր նախադրյալներ տնտեսության եւ բիզնեսի հետագա, շարունակական զարգացման համար:

-Եվ վերջում, ի՞նչ կմաղթեք միջոցառման մասնակիցներին:

-Միջոցառման մասնակիցներին մաղթում ենք վայելել հայկական հյուրընկալությունը, հրաշալի ժամանակ անցկացնել մեր երկրում, ինչպես նաեւ արդյունավետ հանդիպումներ, հետաքրքիր եւ բովանդակալից քննարկումներ, նոր համագործակցությունների շուրջ համաձայնություններ:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԲԵՐՁՈՐԻ ԱՎԵՐՎԱԾ ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Վերջին երկու-երեք օրը ակտիվորեն քննարկվում է Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցու գոյության հարցը. հայտնի է, որ ադրբեջանական կողմը հիմնահատակ ավերել է եկեղեցին:

Եկեղեցին Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմին է պատկանում եւ կառուցվել է 1996-ից 1999 թվականներին՝ արցախյան առաջին պատերազմից եւ Արցախի ազատագրումից հետո Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավար Ալեքսան Հակոբյանի նախաձեռնությամբ:

1996 թվականի մարտի 3-ին եկեղեցու հիմքը դրվել է փոքրիկ բարձրության վրա: Գմբեթի խաչի օծումը կատարվել է 1998 թվականի մայիսի 31-ին, եւ կառուցման աշխատանքները ավարտվել են 1998 թվականին: Նախագծի հեղինակն ու վերահսկող ճարտարապետը՝ Հրաչյա Գասպարյանն է, քանդակագործը՝ Արտաշես Հովսեփյանը, իսկ սրբապատկերների նկարիչը՝ Կարո Մկրտչյանը:

Եկեղեցու բացման առաջին օրից շրջանի հոգեւոր հովիվն է եղել Հայր Աթանաս վարդապետը, իսկ 2019 թվականից նրան փոխարինել է Տեր Բենիամին քահանա Ծատուրյանը: Եկեղեցին գտնվում էր Հակարի գետի ձախափնյա ժայռոտ ձորալանջին: 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի Նախագահը Հադրութ քաղաք այցի ընթացքում հայտարարել էր, որ Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցին պետք է մզկիթ դարձնել: Նախկին Բերձոր քաղաքը Ադրբեջանի զինված ուժերին հանձնելն արդեն շրջանառվում էին տեղեկություններ, որ Սուրբ Համբարձման եկեղեցին վերածվելու է ադրբեջանական մզկիթի: Մասնավորապես՝ 2022 թվականի օգոստոսին «Ադրբեջանի հուշարձանների պաշտպանության հասարակական միավորում» կազմակերպությունը հայտարարել էր նման ծրագրի եւ նախագծի առկայության մասին, որի համաձայն նախատեսված էր քանդել գմբեթի վեղարն ու զանգակատունը, որոնց փոխարեն պիտի կառուցվեր երկու մինարեթ: 2023 թվականի հունիսի 23-ին Արցախի Հանրապետության Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայությունը հայտարարել, որ Ադրբեջանը Սուրբ Համբարձման եկեղեցին վերածում է ադրբեջանական մզկիթի, իսկ արդեն մի քանի օր առաջ արբանյակային քարտեզի միջոցով հայտնի դարձավ, որ ադրբեջանցիները եկեղեցին հիմնահատակ ավերել են:

Եկեղեցու ճարտարապետը ճանաչված եկեղեցաշինարար Հրաչյա Գասպարյանն է եղել: Հիմնական քանդակագործերի հեղինակը հայ անվանի քանդակագործ Արտաշես Հովսեփյանը:

Եկեղեցու դիմային ճակատին քանդակված է գրիգոր Նարեկացու խոսքը՝ «Թաղեցեալք լինիմք, եւ ո՛չ խոնարհիմք»:

Տաճարի երեք դռների հեղինակը փայտագործ վարպետ Վանո Դադոյանն է:

Եկեղեցու ջահը եւ խաչերը պատրաստել են ՀՀ հուշարձանների պահպանության վարչության Աշտարակի արվեստանոցի դարբինները, իսկ երկու զանգերը նվիրաբերված են Լիբանանի հայ համայնքի կողմից:

Եկեղեցին կառուցված է Սիսիանի Շաքի գյուղի հանքավայրերի կապտավուն բազալտ քարից եւ ցեմենտի շաղախից:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԻՄՊՐԵՍԻՈՆԻՍՏ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

ԳԵՂԵՑԻԿԸ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Մայիսի 16-ին՝ ժամը 19:30-ին, «Առնո Բաբաջանյան» համերգասրահում կկայանա «Լուսնի լույսը. Իմպրեսիոնիզմի գլուխգործոցների պատմությունն» խորագրով համերգը: Մենակատարներ՝ Աննա Ցագարելլի (դաշնամուր), Կարեն Շահգալդյան (ջութակ):

Աննա Ցագարելլի նոր հեղինակային ծրագրում հանդիսատեսը կարող է վերագտնել իմպրեսիոնիստ կոմպոզիտորների ամենահայտնի ստեղծագործությունները, ինչպես նաեւ լսել առասպելներ, հեքիաթներ, բանաստեղծություններ ու բազմաթիվ հետաքրքիր պատմություններ երաժշտության մասին:

Հեղինակը գրում է. «Իմպրեսիոնիզմի գլուխգործոցների մասին համերգային նախագիծն իմ ամենասիրելի ծրագրերից է: Այստեղ համատեղվում են գեղեցկագույն երաժշտությունը, կերպարվեստը, պոեզիան եւ անչափ գրավիչ արվեստային պատմությունները: Ես կպատմեմ առասպելական կերպարների, արքայադուստրերի եւ գնչուների մասին, կկարդամ պոեզիա, ցույց կտամ նկարազարդումներ եւ տեսանյութեր... Իմպրեսիոնիստների կերպարային աշխարհին անտրեսակայելի գեղեցիկ է եւ բանաստեղծական: Եթե ուզում եք երկու ժամով մոռանալ առօրյան, կտրվել հոգսերից ու ոգեշնչվել գեղեցիկով՝ ապա այս ծրագիրն այն է, ինչ ձեզ հարկավոր է»:

Աննա Ցագարելլին դաշնակահարուհի է. ավարտելով Մոսկվայի կոնսերվատորիան եւ ասպիրանտուրան՝ արժանացել է մի շարք միջազգային մրցույթների դափնեկիրի կոչման, մասնակցել բազմաթիվ երաժշտական փառատոների: Մոսկվայի Մեծ թատրոնի կամերային երաժշտության համերգաշարի հրավիրված արտիստ է, դասական երաժշտության «Երաժշտական պատվաստում» նախագծի ղեկավար, դաշնամուրի դասավանդման սեփական մեթոդիկայի հեղինակ:

Նախագծի հատուկ հյուրն է Կարեն Շահգալդյանը: Երաժիշտը համերգներով հանդես է եկել աշխարհի լավագույն դահլիճներում. Նյու Յորքի Կարնեգի Հոլ, Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճ, Վիեննայի Մուզիկֆերայն... Կարենը Շահգալդյանը համերգներով այցելել է շուրջ 30 երկրների 200-ից ավելի քաղաքներ՝ հանդիսատեսին մշտապես գերելով իր կատարողական վարպետությամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

18 ՄԵԴԱԼ ԵՆ ՆՎԱՃԵԼ

Հայաստանի սամբոյի տարբեր տարիքային հավաքականները 3 ոսկե, 8 արծաթե եւ 7 բրոնզե մեդալ են նվաճել Սերբիայի Նովի Սադ քաղաքում մայիսի 9-12-ն անցկացված Եվրոպայի պատանիների, երիտասարդների եւ մեծահասակների առաջնությունում:

Թիմային ընդհանուր հաշվարկով հայ մարզիկները 18 մեդալով զբաղեցրել են 4-րդ հորիզոնականը:

Հայաստանի հավաքական կազմում Եվրոպայի չեմպիոնի կոչմանն արժանացել են Մայիս Ներսիսյանը (64 կգ/ մարտական սամբո), Աննա Այվազյանը (50 կգ/ երիտասարդներ) եւ Ալեքս Խաչատրյանը (53 կգ/ պատանիներ):

Մեծահասակների պայքարում փոխչեմպիոնի կոչմանն արժանացել են 64 կգ քաշային Նարեկ Դալլաքյանը, 98 կգ քաշային Արսեն Խանջյանը, մարտական սամբոյի 98 կգ քաշային կարգում հանդես եկող Արման Ավանեսյանը եւ 54 կգ քաշային Արփինե Մնացականյանը: Երիտասարդների պայքարում արծաթե մեդալներ են նվաճել Սամվել Ղազարյանը (79 կգ), իսկ պատանիների պայքարում՝ Մելինե Առաքելյանը (47 կգ քաշային), Նարեկ Սիմոնյանը (53 կգ) եւ Սեյրան Սարուխանյանը (88 կգ):

Մեծահասակների պայքարում բրոնզե մեդալներ են նվաճել Կարեն Սարգսյանը (58 կգ), Սրբուհի Հովակիմյանը (59 կգ), մարտական սամբոյի 71 կգ քաշային Միեր Մերջանյանը եւ 88 կգ քաշային Ավետիք Պողոսյանը: 18-20 տարեկան երիտասարդների պայքարում պատվո հարթակի երրորդ աստիճանին են կանգնել Միեր Մելոյանը (58 կգ) եւ Անի Մարտիրոսյանը (54 կգ), իսկ 16-18 տարեկան պատանիների պայքարում՝ 79 կգ քաշային Լեւոն Վանոյանը:

Եվրոպայի առաջնությանը մասնակցել է 29 երկրի շուրջ 600 մարզիկ:

Ավելի վաղ՝ Եվրոպայի առաջնության նախօրեին, տեղի է ունեցել մարզաձեւի Եվրոպայի ֆեդերացիայի գործկոմի նիստը, որի շրջանակում անցկացվել են գործկոմի նոր կազմի եւ ֆեդերացիայի ղեկավար կազմի ընտրությունները:

Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահ Միքայել Հայրապետյանն ընտրվել է Եվրոպայի ֆեդերացիայի փոխնախագահի պաշտոնում:

ԱՎԱՐՏԵԼ ԵՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԴՈՒԲԱՅՈՒՄ

Հայաստանը ներկայացնող շախմատիստներն ավարտեցին ելույթները Դուբայի միջազգային մրցաշարում:

Հայաստանի ներկայացուցիչներից լավագույն արդյունքը գրանցել է Շանթ Սարգսյանը, որն 9 հնարավորից հավաքել է 6 միավոր եւ գրավել 8-րդ հորիզոնականը: Նույն միավորով 13-րդ տեղում Հայկ Մարտիրոսյանն է: Հովիկ Հայրապետյանը 30-րդ տեղում է, Սամվել Տեր-Սահակյանը՝ 31-րդ:

Մրցաշարի լավագույն երեք տեղերում Հնդկաստանի ներկայացուցիչներն են:

● Մայիսի 16-ին՝ժամը 19:30-ին, Առնո Բաբաջանյան համերգասրահում կներկայացվի «Լուսնի լույսը» երաժշտական միջոցառումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով:

Հայկ Գաբրիելյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը,

բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց,

գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

ՀՀ փաստաբանների պալատ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանը իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար եւ իրավունք ունի գործի քննությունը հետաձգելու՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչեւ երեքամսյա ժամկետ: Այս դեպքում ամուսնալուծությունը կատարվում է, եթե ամուսինները (նրանցից մեկը) պնդում են ամուսնալուծվելու համար:

Ամուսնալուծության համար ամուսինների փոխադարձ համաձայնության առկայության դեպքում դատարանը լուծում է ամուսնությունը ամուսինների կողմից ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր ունեն մասնակի կենսաթոշակի իրավունք:

Արփինե Ստեփանյան (58 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մասնակի կենսաթոշակ նշանակվում է՝

1) կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին, եւ ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է,

2) թատերական եւ թատերահանդիսային կազմակերպությունների որոշ կատեգորիաների դերասաններին, եթե լրացել է նրանց 50 տարին, եւ ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է,

ՀՀ սոցիալական ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 1-ին եւ 2-րդ կետերում նշված այն անձանց, ովքեր մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառվել են մասնակի կենսաթոշակ նշանակելու համար (ունեցել են առնվազն 12 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ), եւ լրացել է նրանց՝ սույն հոդվածով սահմանված մասնակի կենսաթոշակի իրավունք տվող տարիքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը երեկ Սուրբ Աննա եկեղեցում հանդիպեց «Տավուշը հանուն հայրենիքի» ակցիայի մասնակիցներին եւ աջակիցներին, որտեղ անձրեւի պատճառով քաղաքացիների հետ զրույցի չգալանալը մեկնաբանեց լավատեսական կերպով՝ ասելով. «Այս անձրեւը մեր մեղքերը սրբելու մասին է»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



	Շիրակ	+1 +5 +10 +15
	Կոտայքի լեռներ	+1 +3 +10 +12
	Կոտայքի նախալեռներ	+6 +8 +14 +16
	Գեղարքունիք	+2 +5 +10 +12
	Լոռի	+3 +6 +13 +16
	Տավուշ	+6 +9 +15 +19
	Արագածոտնի լեռներ	0 + 4 +10 +13
	Արագածոտնի նախալեռներ	+6 +9 +15 +19

	Արարատ	+10 +12 +21 +23
	Արմավիր	+9 +11 +21 +23
	Վայոց ձորի լեռներ	0 +2 +8 +11
	Վայոց ձորի նախալեռներ	+8 +10 +20 +22
	Սյունիքի հովիտներ	+8 +11 +16 +20
	Սյունիքի նախալեռներ	+8 +12 +14 +17
	ԼՂՀ	+7 +10 +14 +16
	Երեւան	+16 +19 +20 +22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.5.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*